

ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ՊՆ պաշտպանական քաղաքականության
վարչության պաշտպանական քաղաքականության
պլանավորման բաժնի պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին
դասի խորհրդական, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ հայցորդ

**ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍՈՂԵԼԻ ԿԵՐՊԱՓՈՒՄՄԱՆ
ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀԵՏԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ**

1991 թվականին անկախություն ձեռք բերած նախկին Խորհրդային Միության Հանրապետությունները անցել են քաղաքական և սոցիալ-տնտեսական վերափոխումների երկար ճանապարհ: Ընդունված է խոսել վերոնշյալ հանրապետությունների քաղաքական համակարգի տարանցման մասին՝ ամբողջատիրակազմից դեպի ժողովրդավարական: Այնուամենայնիվ, վերը նշված գործընթացն ընթանում է արդեն 27 տարի, և ակնհայտ է, որ հետխորհրդային տարածքի գերակշռող մասում պետական կառավարման կերպափոխումը ձգձգվել է: Ընդհանուր առմամբ, հետխորհրդային այսպես կոչված «անցումային ժողովրդավարությունները» հիմնականում նախագահական, կիսանախագահական և խորհրդարանական/նախագահական Հանրապետություններ են: Պետք է նշել, որ չնայած հետխորհրդային երկրների միջև աշխարհագրական և էթնոմշակութային տարբերություններին, պետական կառավարման մոդելի կերպափոխումը հիմնականում ընթացել է միևնույն մոտեցումների և մեթոդների օգտագործմամբ: Հետխորհրդային տարածքի մի շարք հետազոտողներ, այսպես կոչված, «ժողովրդավարության կղզյակներ են» համարում Մոլդովան, Վրաստանը և Դրոգոստանը: Սույն հոդվածում մենք կփորձենք հակիրճ իրականացնել վերոնշյալ երկրների միջև հիմնական համեմատությունները և տարբերությունները:

Հիմնարաներ- փոխակերպում, պետական կառավարում, հետխորհրդային, վերափոխում, անցումային, ժողովրդավարություն:

1991 թվականին ձեռքբերելով անկախություն՝ ԽՍՀՄ նախկին Հանրապետությունները անցան քաղաքական և սոցիալ-տնտեսական կերպափոխման երկար ճանապարհ: Քաղաքագիտության մեջ ընդունված է սովորաբար խոսել վերոնշյալ Հանրապետությունների տոտալիտար համակարգից ժողովրդավարականին տարանցման մասին: Այնուամենայնիվ վերոնշյալ գործընթացն ընթանում է արդեն 27 տարի և ակնհայտ է, որ հետխորհրդային տարածքի ճնշող մասում պետական կառավարման կերպափոխման գործընթացը ակնհայտ ձգձգվել է:

Անցած դարի 90-ականների սկզբին փորձագիտական հանրույթի մեծ մասն ընդհանուր առմամբ համամիտ էր Ֆ.Ֆուկույամայի «Պատմության վերջը և վերջին մարդը» աշխատության մեջ արձարձված այն պնդման հետ, համաձայն որի՝ կոմունիստական ռեժիմների փլուզումից հետո սկսվելու է ազատական ժողովրդավարության և շուկայական տնտեսության գլոբալ հաղթարշավը [1, էջ 268]: Ըստ այդմ ժողովրդավարացման նոր ալիքը պետք է ընդգրկեր ամբողջ հետխորհրդային Եվրասիայի տարածքը և կարճ ժամանակահատվածում լուծեր Եվրոպայի քաղաքակրթական ընդլայնման խնդիրը:

Սակայն պետք է նշել, որ իրադարձությունները զարգացան մի փոքր այլ տրամաբանությամբ: ԱՊՀ մասնակից պետությունների առջև ծառայած մարտահրավերները և սպառնալիքները խթանե-

ցին զարգացնելու վերջիններիս առավել «արդյունավետ» արձագանքելու մեխանիզմներ: Արդյունքում, հետխորհրդային տարածքում ստեղծվեցին քաղաքական համակարգի տարբեր մոդելներ, որոնց համար առավել ընդունելի էր Հանթինգթոնյան տրանզիտոլոգիայի մեթոդաբանությունը: Ս.Հանթինգթոնի պնդմամբ՝ գոյություն ունի «ժողովրդավարացման ալիք» հասկացությունը, որն ըստ էության ոչ ժողովրդավարականից՝ ժողովրդավարական ռեժիմների անցումն է, որն իարականանում է կոնկրետ ժամանակահատվածում և զգալիորեն գերազանցում է հակառակ ուղղությամբ անցումների քանակը [2, էջ 19]: Վերոնշյալ ալիքը ներառում է նաև ազատականացում կամ մասամբ ժողովրդավարացում այն քաղաքական համակարգերում, որոնք այդպես էլ լիովին ժողովրդավար չեն դառնում: Խոսելով ավտորիտարիզմի և ժողովրդավարության «սև-սպիտակ» հակադրումից Օ'Ղոնելը մատնանշում է աշխարհի քաղաքական քարտեզի վրա «ոչ լրիվ ժողովրդավարությունների» կողմից ձևավորվող «մոխրագույն գոտու» առկայության մասին [3, էջ 17]: Այս գոտու մեջ մտնող երկրները, ըստ Հանթինգտոնի, «ժողովրդավարություն – ոչ ժողովրդավարություն» սանդղակի վրա տեղ են զբաղեցնում «Դանիայի և Չինաստանի միջև ընկած միջակայքում» [4, էջ 24]: Հասկանալի է, որ վերոնշյալ միջակայքը ընդգրկում է ԽՍՀՄ նախկին հանրապետությունները:

Տրանզիտոլոգիայի պարադիգմի շրջանակներ

www.journal.lawinstitute.am

րում առավել հետաքրքիր են հենց վերոնշյալ երկրները, որոնց մեծ մասը ժամանակին անվանվել էին «անցումային ժողովրդավարություններ»: Ընդհանուր առմամբ հետխորհրդային «անցումային ժողովրդավարությունները» հիմնականում նախագահական, կիսանախագահական և խորհրդարանական-նախագահական հանրապետություններն են: Հետ-խորհրդային երկրները պայմանականորեն կբաժանենք 3 խմբի.

1. Արևելաեվրոպական (Մոլդովա, Ուկրաինա, Բելառուս),
2. Հարավկովկասյան (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան),
3. Կենտրոնասիական (Գրդգստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան, Ղազախստան):

Ընդ որում պետք է նշել, որ չնայած աշխարհագրական և էթնո-մշակութային տարբերությունների, վերոնշյալ խմբերում ընդգրկված մի շարք երկրների պետական կառավարման կերպավորումն ընդհանուր առմամբ ընթացել է բավականին նմանատիպ մեթոդներով և եղանակներով:

Արևմտյան մի շարք հետազոտողների համար որպես հետխորհրդային տարածքի այսպես կոչված «**ժողովրդավարական կղզյակներ**» հաճախ հանդես են գալիս Եվրոպական մասից՝ Մոլդովան, Հարավային Կովկասից՝ Վրաստանը, Կենտրոնական Ասիայից՝ Գրդգստանը: Սույն հոդվածում հիմնական համեմատականները կանցկացվեն հենց վերոնշյալ երկրների միջև:

ԽՍՀՄ փլուզումից հետո 1992-1994թթ. հետխորհրդային տարածքում կարելի է անվանել պետական **բազայի** ստեղծման ժամանակաշրջան: Վերոնշյալ ժամանակահատվածում հետխորհրդային բոլոր երկրներն անցան ազատականացման և ժողովրդավարացման փուլ, երբ նորանկախ պետությունները ստեղծվելով նախկին խորհրդային հանրապետությունների իրավական հիմքերի վրա՝ ընտրեցին իրենց պետական կառավարման մոդելները: Այնուամենայնիվ, վերոնշյալ ժամանակահատվածում «նոր/հին էլիտաները» (նախկին կուսակցական-տնտեսական նոմենկլատուրա) չկարողացան արդյունավետ կերպով իրականացնել ժողովրդավարական ընթացակարգերի շրջանակներում տնտեսական արդիականացման խնդիրները: Արդյուքում լճացավ տնտեսությունը, աղքատացավ բնակչությունը, առաջ եկան գույքի բաշխման խնդրահարույց հիմնահարցեր, և այս ամենը պահանջում էր արագ արձագանք և լիազորությունների կենտրոնացում: Պետք է նշել, որ հետխորհրդային մի շարք երկրներում որպես «անցումային ժողովրդավարության» գործընթացի դանդաղեցման հիմնական պատճառփորձ է կատարվել խաղարկելու ազգային անբողջականության սպառնալիք-

ների առկայությունը (Մոլդովա, Վրաստան, Գրդգստան, մասամբ Ադրբեջան): Քաղաքական իրավիճակը կայունացնելու, նորանկախ պետությունների (ԱՊՀ) տնտեսական արդիականացման և ազգայնակայության խնդիրները կայունացնելու անհրաժեշտությունը պահանջում էր անցում կատարել ուժեղ գործադիր ուղղաձիգ կառավարման մոդելի՝ ամրապնդելով նախագահի դերը: Պատմական ժողովրդավարության ավանդույթի բացակայությունը, ցածր քաղաքական մշակույթը, թերզարգացած քաղաքացիական հասարակությունը, կուսակցական համակարգի թուլությունը 90-ականների կեսերին հետխորհրդային երկրների մեծ մասում (բացառությամբ Մոլդովայի) պատճառ դարձան քաղաքական համակարգում ավտորիտարիզմի դրսևորմանը որպես գերակա տարր [5, էջ 112]: Հետագայում հետխորհրդային տարածքի երկրների մեծ մասը գրանցեց ժողովրդավարական ինստիտուտների զարգացում: 1990-ականների տնտեսության բացասական միտումների ազդեցության ներքո ավտորիտար կառավարման մեթոդները դարձան ինստիտուցիոնալ զարգացման հիմնական առանձնահատկությունները: Վերոնշյալ գործընթացի հետևանքով ակնհայտ դարձավ խիստ վարչական և հարկային հսկողության սահմանումը, բյուրոկրատական-օլիգարխիկ տնտեսության հաստատումը, ինչպես նաև որոշակիորեն անվերահսկելի սեփականաշնորհման գործընթացը: Հետխորհրդային երկրների մեծ մասի հասարակություններում առաջացավ ծայրաստիճան հաստատուն խնդրագիր պետական **paternalism**-ի համար, որը հիմնականում պայմանավորված էր տնտեսության ճգնաժամային երևույթներով (գործազրկություն, զնաճ և այլն): Սոցիալ-տնտեսական նման պայմաններում գերակշռում են սոցիալական անկումը և դեպրեսիան, ինչի արդյունքում բնակչության շրջանում առաջանում է պետական **paternalism**-ի այսպես կոչված «ուժեղ ձեռք» ունենալու ցանկություն, որը կարող է «շտկել իրավիճակը և կայունություն ապահովել»: Հենց այս պատճառով էր, որ ըստ էության որոշ ժամանակով հետաձգվեց ժողովրդավարական արդիականացման գործընթացը հետխորհրդային տարածքի մեծ մասում:

Ամերիկացի տրանզիտոլոգ Թոմաս Քարոթերսը իր «Անցումային պարադիգմի ավարտը» աշխատության մեջ նշում է, որ Ուկրաինայում, Վրաստանում, Գրդգստանում և Մոլդովայում 90-ականների վերջին առաջացել էր «գերիշխող ուժի քաղաքականության» համախտանիշը [6, էջ 2]: Ըստ նրա «այս սինդրոմով երկրները ունեն սահմանափակ, բայց իրական քաղաքական տարածք, որոշակի քաղաքական մրցակցություն հակադիր խմբերի և ժողովրդավարության հիմնական ինստիտուցիո-

նալ ձևերը: Այնուամենայնիվ, մեկ քաղաքական խումբ՝ շարժում, կուսակցություն, ընտանիք կամ մեկ առաջնորդ, համակարգում տիրապետում է այնպես, որ այն հեռանկարում իշխանության փոփոխության համար չունի բավարար հիմքեր: Անցկացվող ընտրությունները հիմնականում կասկածելի են, թեև կարելի է պնդել որ ամբողջովին կեղծ չեն, քանի որ իշխանությունները փորձում են ընկալելի լինել միջազգային հանրության համար: Միևնույն ժամանակ, նախագահական և կիսանախագահական կառավարման մոդել ունեցող հետխորհրդային երկրներում ուժեղ նախագահի դերի ամրապնդման համար պահպանվում էին նաև խորհրդարանի լիազորությունները, որոնք ապահովում էին մրցակցային միջավայր քաղաքական վերնախավի համար:

Թոմաս Բարոթերսը 2005-2010թթ. համարում է «դիսֆունկցիոնալ» ժողովրդավարության փուլ, որն ընդգրկեց Մոլդովան, Ուկրաինան և Ղրղզստանը: Ըստ վերջինիս, գոյություն ունեցող քաղաքական համակարգի մոդելը «դիսֆունկցիոնալ» ժողովրդավարություն կամ «անօգնական բազմակարծության» ռեժիմ է, երբ «իշխանության համար պայքարող կուսակցությունները այնքան են լցվում կույր ատելությամբ միմյանց հանդեպ, որ բոլոր ընդդիմադիր ջանքերն ուղղվում են միայն ցանկացած գնով կանխելու իրենց մրցակիցներին դրական արդյունքների հասնելուց»: Քաղաքական մրցակցությունը տեղի է ունենում խորապես թշնամական կողմերի միջև, որոնք գործում են առանց լուրջ քաղաքական փորձի: Իշխանությունն անցնում է մեկ կարճաժամկետ քաղաքական խմբից մյուսը, որը ղեկավարում է խարիզմատիկ առաջնորդ կամ կուսակցությունների ժամանակավոր դաշինք:

Պետք է նշել, որ ժողովրդավարական գործընթացի անշրջելիության ապահովումը և քաղաքական ճգնաժամը, որոնք հանգեցրեցին այսպես կոչված «գունավոր հեղափոխությունների», հանգեցրեցին Ուկրաինայում և Ղրղզստանում «դիսֆունկցիոնալ» ժողովրդավարության:

Վերոնշյալ մոդելի շրջանակներում առաջանում են հիմնականում հետևյալ հատկանիշները.

- կառավարության սերտ հարաբերություններ խորհրդարանի հետ (հատկապես կուսակցական մեծամասնության հետ),
- կառավարության և նրա անդամների մեծամասնության կախվածությունը կառավարության ղեկավարից, այլ ոչ թե երկրի նախագահից,
- նախագահի և կառավարության միջև շահերի բախման արդյունավետ սխեմաների բացակայություն, «երկակի ուժի» առաջացում (Ուկրաինայի օրինակը, երբ 2004թ. դեկտեմբերին Վ. Յուշչենկոյի և Վ. Յանուկովիչի կողմնակիցները հասան փոխզիջման: Քաղաքական էլիտան համաձայնու-

թյան եկավ սահմանադրական փոփոխությունների փաթեթի ընդունման շուրջ, որով Ուկրաինան նախագահական-խորհրդարանականից վերածվելու էր խորհրդարանական/նախագահական հանրապետության և խորհրդարանը հնարավորություն ստացավ ձևավորել կառավարություն, որը փաստորեն անկախ էր երկրի նախագահից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «դիսֆունկցիոնալ» ժողովրդավարությունը չի ստեղծում ժողովրդավարական ընտրության անփոփոխելիության մեխանիզմներ, տարբեր հանգամանքներում իշխանության փոփոխությունը կարող է վերածվել ժողովրդավարության տարանցման, ինչպես նաև «ավտորիտար արդիականացման»:

Վերջինիս վառ օրինակն է **Ղրղզստանը**: Երկրի նախկին նախագահ Ա.Ակակի օրոք ընդունված սահմանադրության համաձայն՝ Ղրղզստանը նախագահական-խորհրդարանական հանրապետություն էր, որի քաղաքական համակարգը բնութագրվում էր որպես մրցակցային ավտորիտարիզմ, ժողովրդավարական տարանցման տարրերով: Հենց այդ ժամանակ էր, որ Ղրղզստանն անվանվեց «ժողովրդավարության կղզի, Կենտրոնական Ասիայի ավտորիտարիզմի ծովում»: Սակայն հետագայում այդ երկրում ծավալված իրադարձությունները ցույց տվեցին, որ Ղրղզստանը բռնել էր «ավտորիտար արդիականացման» ճանապարհը [7]: Հենց այս հեռացումն էլ ժողովրդավարական գործընթացներից բերեց 2010թ. «հեղափոխական» իրադարձություններին: Նոր սահմանադրությամբ արդեն Ղրղզստանում հայտարարվեց ժողովրդավարության խորհրդարանական-նախագահական մոդելի կառուցման մասին: Անկասկած սա արդյունք էր երկրի էլիտաների կոնսենսուսի: Հաշվի առնելով Ղրղզստանի ազգային առանձնահատկությունները, երկրի տարբեր տարածաշրջանների կլանային իշխանության խորը ավանդույթները, վերոնշյալ անցումն ընթացել և ներկայումս էլ ընթանում է ոչ այնքան հարթ՝ ժամանակ առ ժամանակ նույնիսկ ստանալով ուժային պայքարի ձև:

Գալով **Վրաստանի** օրինակին պետք է նշել, որ նախագահ Մ.Սահակաշվիլու օրոք երկրի կենտրոնական կառավարության դիրքերի ամրապնդումն իր հետ բերեց պետական կառույցներում կոռուպցիայի մակարդակի զգալի նվազում: Այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում նկատվեց երկրի խորհրդարանի դերակատարության թուլացում, որի արդյունքում սահմանափակվեցին օրենսդիր մարմնի կողմից գործադիր իշխանությանը վերահսկելու մեխանիզմները: Երկրի ոչ խորհրդարանական ընդդիմությունը մեղադրեց նախագահին իշխանության յուրացման, քաղաքական ահաբեկչության իրականացման, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ոտնահարման մեջ:

Երկրի իշխանությունների կողմից ցուցաբերված անհանդուրժողականության արդյունքում 2007թ. աշնանը Թբիլիսիում գրանցվեցին զանգվածային ցույցեր և բախումներ [8, էջ 162]: Հետագոտողները առանձնահատուկ ուշադրություն են դարձնում Մ.Սահակաշվիլու կողմից Վրաստանում իրականացրած անվտանգության համակարգի բարեփոխման և կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացին: Առավել արմատական փոփոխություններն իրականացվել են իրավապահ մարմիններում. Օրինակ բարեփոխումների արդյունքում լուծարվեց պետական անվտանգության նախարարությունը՝ ստեղծելով նոր կառույց՝ Արտաքին հետախուզության ծառայություն [9, էջ 158]: Վրաստանում իրավապահ մարմինների բարեփոխումների գործընթացն իրականացվեց որպես հիմք վերցնելով ամերիկյան մոդելը: Այնուամենայնիվ, ի տարբերություն վերջինի, Վրաստանում ըստ էության բացակայում էր իշխանության գործունեության նկատմամբ քաղաքացիական և խորհրդարանական վերահսկողության համակարգը: Հետագա իրադարձությունները Վրաստանում ցույց տվեցին, որ ժողովրդավարական զարգացման ուղուց հեռացումը անցնում չի լինում: 2013թ. Վրաստանի խորհրդարանի կողմից ընդունված փոփոխությունների համաձայն՝ երկիրը նախագահական-խորհրդարանական մոդելից անցում կատարեց խորհրդարանական-նախագահական կառավարման ձևի՝ նախագահի և վարչապետի միջև լիազորությունների արդյունավետ վերաբաշխման արդյունքում երկրի կառավարման հիմնական լծակները կենտրոնացնելով վարչապետի ձեռքերում: Արդեն անցել է 5 տարի, վերոնշյալ մոդելը ամրապնդվում է երկրում, սակայն վերջնարդյունքի արդյունավետությունը կախված է լինելու երկրի քաղաքական ղեկավարության ժողովրդավարական անցման շրջանում իրականացվող շարունակական բարեփոխումների խթանմանը նեցուկ կանգնելու կամքի առկայությունից:

Անդրադառնալով **Մոլդովայի** օրինակին, պետք է նշել, որ 2001թ. խորհրդարանական ընտրություններից հետո, երբ կոմունիստները ստացան մեծամասնություն խորհրդարանում, որի արդյունքում վերջինս Մոլդովայի նախագահ ընտրեց կոմունիստ Վ.Վորոնինին: Սրանով փաստորեն Մոլդովայում հիմք դրվեց «մրցակցային-ավտորիտար խորհրդարանական» մոդելին: Մի կողմից, երկրում պաշտոնապես պահպանվեց խորհրդարանական կառավարման ձևը, որտեղ նախագահն իր գործունեությամբ որոշակիորեն սահմանափակված էր խորհրդարանի կողմից և մյուս կողմից, խորհրդարանում մեծամասնության ապահովումը նախագահ Վորոնինի ձեռքում ըստ էության կենտրոնացրեց պետական բոլոր ֆորմալ և ոչ ֆորմալ որոշում-

ների կայացման մեխանիզմները: Սակայն Մոլդովայի խորհրդարանում կոմունիստների կողմից մեծամասնության կորստից հետո երկրում իրավիճակը վերադարձավ «դիսֆունկցիոնալ» ժողովրդավարության տրամաբանությանը: Ներկայումս Մոլդովայում նկատվում է երկրի նախագահի և կառավարություն/խորհրդարան տանդեմի միջև հարաբերությունների լարվածություն, ինչը առաջին հայացքից կարող է թողնել ժողովրդավարական երկրում ընթացող քաղաքական գործընթացի տպավորություն: Այնուամենայնիվ, վերոնշյալ իրավիճակի առկայությունը երկրում վկայությունն է ժողովրդավարական անցման շրջանում արդիականացման և բարեփոխումների ճանապարհից շեղման, ինչպես նաև պետական կառավարման և իրավական համակարգերի լուրջ բացերի առկայությամբ [10]:

Ամփոփելով հետխորհրդային մի շարք «անցումային ժողովրդավարությունների» պետական կառավարման մոդելների անցած ուղու համառոտ նկարագրիրը պետք է նշել, որ հիմնականում նախագահական և կիսանախագահական կառավարման համակարգ ունեցող երկրները 21-րդ դարի սկզբից սկսեցին անցում կատարել դեպի խորհրդարանական/նախագահական հանրապետություններ: Վերոնշյալ գործընթացը անցումային ժողովրդավարության երկրների զարգացման տրամաբանական փուլ է, երբ պետության հետագա և առավել արդյունավետ զարգացումն ապահովելու համար՝ անցում է կատարվում կառավարման խորհրդարանական համակարգին: Վերոնշյալ անցման համար յուրաքանչյուր երկիր ունի իր «բաղադրատոմսը»՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երկրի ինչպես պետական/քաղաքական համակարգի կայացվածության աստիճանը, այնպես էլ էթնո-մշակութային առանձնահատկությունները: Ներկայումս հստակ է, որ հետխորհրդային տարածքի ժողովրդավարական անցման գործընթացում գտնվող հասարակությունների համար գոյություն ունեն քաղաքական զարգացման բազմաթիվ չափումներ: Այնուամենայնիվ անցման փուլից դեպի կայուն ժողովրդավարություն անցնելու համար առաջնային են պետական իշխանության առանցքային ինստիտուտների արդյունավետության բարելավումը, քաղաքական բազմակարծության ամրապնդումը, քաղաքական գործընթացը ֆարսի չվերածելը, հասարակության ամբողջական մասնակցությունը քաղաքական գործընթացին և այլն: Վերոնշյալ գործընթացի արդյունավետ իրականացմամբ միայն կարող է ավարտվել հետխորհրդային երկրների «անցումային ժողովրդավարությունների» ժամանակաշրջանը, որն արդեն ակնհայտորեն ձգձգվել է և սահուն անցում կատարել դեպի նոր շրջան, այն է՝ կայուն ժողովրդավարական համակարգ:

Օգտագործված աղբյուրներ

1. Fukuyama F., The End of History and the Last Man, Penguin Books, 1992.
2. Huntington S.P., Democracy's Third Wave, Journal of Democracy, University of Oklahoma Press, 1991
3. O'Donnell G., Delegative Democracy, Kellogg Institute, 1993.
4. Huntington S.P., Democracy's Third Wave, Journal of Democracy, University of Oklahoma Press 1991
5. Фисун Александр, Демократия, неопатримониализм и глобальные трансформации, Харьков, Константа, 2006.
6. Carothers Thomas, The end of the Transition Paradigm, Journal of Democracy, Volume 13, Issue 1
7. Ким Дмитрий, Конституционные реформы в Кыргызстане [электронный ресурс]
<http://www.eurasianhome.org/xml/t/expert.xml?lang=ru&nic=expert&pid=2306>.
8. Tatum Jessee David, Democratic transition in Georgia. Post-rose revolution internal pressures on Leadership, Caucasus Review of International affairs, Frankfurt, Vol 3, Issue 2.
9. Tatum Jessee David, Democratic transition in Georgia. Post-rose revolution internal pressures on Leadership, Caucasus Review of International affairs, Frankfurt, Vol 3, Issue 2.
10. Брутер Владимир, Политические процессы в Молдове в 1988-2003гг. [электронный ресурс]
http://www.igpi.ru/bibl/igpi_publ/moldova-brooter.html.

Тигран Арутюнян

Заместитель начальника отдела планирования оборонной политики
департамента оборонной политики МО РА, советник 1-ого класса,
соискатель ученой степени Национального университета
оборонных исследований МО РА

РЕЗЮМЕ***Краткий обзор трансформации модели государственного управления
на постсоветском пространстве***

Республики бывшего СССР приобретя независимость в 1991 году прошли долгий путь политических и социально-экономических преобразований. Общепринято говорить о транзите политической системы вышеупомянутых стран из тоталитарной к демократической. Тем не менее, вышеупомянутый процесс длится уже 27 лет, и очевидно, что трансформация государственного управления в подавляющей части постсоветского пространства затянулась. В целом постсоветские так называемые «переходные демократии» в основном являются президентскими, полупрезидентскими и парламентскими/президентскими республиками. Следует отметить, что, несмотря на географические и этнокультурные различия между постсоветскими странами, преобразование модели государственного управления в основном проходило с использованием аналогичных подходов и методов. Для ряда исследователей, так называемыми «островками демократии» в постсоветском пространстве являются Молдова, Грузия и Кыргызстан. В данной статье мы попытаемся в кратце провести основные сравнения и различия между вышеупомянутыми странами.

Ключевые слова: трансформация, государственное управление, постсоветский, преобразование, переходный, демократия.

Tigran Harutyunyan

Deputy Head of Defence Policy Planning branch,
Defence Policy Department of the MoD of the RA, 1-st Degree Adviser,
Correspondence Degree Seeker of the National Defence Research
University of the MoD of the RA

SUMMARY***Short review of the Public Administration model transformation in Post-soviet space***

The Republics of the former USSR acquired independence in 1991 have come a long way in the political and socio-economic transformation. It is generally accepted to speak on the transit of the political system of the countries from totalitarian to democratic. Nevertheless, the above-mentioned process has lasted for 27 years, and it is obvious that the transformation of public administration in the majority of the post-Soviet space has been protracted. In general, the post-Soviet so-called “Transitional Democracies” are mainly presidential, semi-presidential and parliamentary/presidential Republics. It should be noted that, in spite of the geographic and ethno-cultural differences between the post-Soviet countries, transformation of the public administration model mainly took place using similar approaches and methods. For a number of researchers, the so-called “Islands of democracy” in the post-Soviet space are Moldova, Georgia and Kyrgyzstan. In this article we will try briefly touch upon the main similarities and differences between the above-mentioned countries.

Key words: Transformation, public administration, post-Soviet, transition, democracy.